ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«25» մարտի 2015թ

ՀՐԱՄԱՆ

№ 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 01 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 14-րդ կետի 4)-րդ ենթակետը և 19-րդ կետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին կից կոլեգիա ստեղծելու մասին» N01 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի N 1 հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին կից կոլեգիայի կազմը լրացնել նոր տողով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սիրեկան Օհանյան՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

«25» III 2015թ.
ք. Երևան